ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱԶՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ինպես հայտնի է, փոխատեղույթներն առաջ են գալիս բառերի բաղադրիչների՝ արմատների ու ածանցների հետևառաջությունից: Նշված դրափոխությունը կարող է հանգեցնել թե՛ հնչյունական, թե՛ իմաստային փոփոխությունների: Մեր խնդիրն է քննել նույնաբաղադրիչ փոխատեղույթային բառազույգերի հնչյունական կազմը, հնարավոր հնչյունական տարբերություններն ու ընդհանրությունները:

Նույնաբաղադրիչ փոխատեղույթների հնչյունական կազմի քննությունը ցույց է տալիս, որ բառազույգերում անդամները լինում են երկու կարգի՝ տարահնչյուն կամ նույնահնչյուն: Առաջին դեպքում բառերը հիմնականում միևնույն հնչյուններից են բաղկացած, բայց կան նաև որոշակի տարբերություններ: Երկրորդ դեպքում բառերը բացառապես նույն հնչյուններն ունեն: Կանգ առնենք նշված տեսակների վրա առանձին-առանձին և ցույց տանք տարահնչյունության և նույնահնչյունության առաջացման պատճառները և տարբերիչ գծերը:

I. ՏԱՐԱՀՆՉՅՈՒՆ ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐ

Հնչյունակազմական տարբերությունների առաջացման պատճառները մի քանիսն են:

1. Հնչյունափոխություն: *Բառազույգի անդամներից մեկում բարդության հնչյունափոխման ենթակա բաղադրիչը բառավերջում է, շեշտակիր է, հետևապես փոփոխված չէ: Բայց նույն այս բաղադրիչը երկրորդ անդամում դրափոխության հետևանքով հայտնվում է բառասկզբում, կորցնում է շեշտը և հնչյունափոխվում է: Ասվածը նախ ցույց տանք ձայնավորների փոփոխման օրինակներով: Գեղաժպիտ – ժպտագեղ, գեղանկարիչ – նկարչագեղ, կանաչադեղին - դեղնականաչ, լանջահովիտ – հովտալանջ զույգերում առաջին անդամների* ի *հնչյունը երկրորդ անդամներում սղվել է և պատճառ դարձել դրանց հնչյունակազմական տարբերության: Մնացած հնչյունները անդամներում նույնն են: Խոհասիտ – մտախոհ, տերևախիտ – խտատերև, ճակատապինդ - պնդաճակատ, քարախիճ - խճաքար զույգերում* ի*-ն երկրորդ անդամներում հնչյունափոխվել է* ը*-ի՝ առաջ բերելով հնչյունական մեկ այլ տարբերություն: Հետևյալ խմբում բառավերջի բաղադրիչներում է ձայնավորը բառասկիզբ գալով դառնում է* ի*. փորձագետ - գիտափորձ, խաղասեր – սիրախաղ, պարահանդես – -*

հանդիսապար, փայտաշեն – շինափայտ, դրամանվեր – նվիրադրում: Այդ ձայնավորներն էլ խախտում են անդամների հնչյունակազմական նույնությունը:

Նախապես ու *ձայնավորով բաղադրիչը, բառավերջից բառասկիզբ գալուց հետո, ունենում է գաղտնավանկ* ը, *ուստի գայլաշ*ուն, *գեղան*ուրբ, *խաղաթ*ուղթ, *պարախ*ումբ, *նավակատ*ուրջ *անդամների զույգերում հնչում է՝ շնագայլ, նրբագեղ, թղթախաղ, խմբապար, կամրջանավ:*

Ը ձայնավորի հնչյունակազմական տարբերիչ լինելը տեղի է ունենում երկու ճանապարհով: Նախ՝ այն հնչում է բառազույգերում անդամներից մեկի գաղտնավանկում, իսկ մյուսում չի հնչում: Բայց այս մասին փոքր-ինչ հետո (3-րդ կետ): Այժմ ավելի լսելի հնչողության մասին: Վերջինս լինում է այնպիսի բառազույգերում, որոնցում երկրորդ անդամները վերլուծական բարդություններ են՝ կայուն բառակապակցությունների տեսքով և որոնց փոխարեն, բաղադրիչների հետևառաջությունից հետո, առաջին անդամներում համադրական բարդություններ են: Այդ բառակապակցությունների առաջին բաղադրիչներն ընդունում են որոշյալ ը *հոդը. գիրկը բաց, գլուխը կախ, սիրտը լայն, գլուխը տաք, ճակատը բաց: Քանի որ նույն այս բաղադրիչներն երկրորդ անդամներում բառավերջում են և, բնականաբար, հոդի հարկը չկա, ուստի հնչյունակազմերն էլ փոքր-ինչ այլ են՝ բացգիրկ, կախգլուխ, լայնսիրտ, տաքգլուխ, բացճակատ: Հմմտ. նաև. բերանը բաց (զարմացած), սիրտը բաց, սիրտը կախ, բերանը փակ (գաղտնապահ), երեսը պարզ և բացբերան, բացսիրտ, կախսիրտ, փակբերան, պարզերես:*

Այժմ անցնենք բառակազմական տարբերիչ նշանակություն ունեցող բաղաձայններին: Որպես այդպիսիք հանդես են գալիս յ, ն, վ *հնչյունները: Յ բաղձայնի դեպքում համեմատաբար փոքր դեր է խաղում նրա ձայնակապ լինելու հանգամանքը: Ոչ մեծ թվով բառազույգերի առաջին անդամներում բարդության մեջ երկրորդ դիրքում լինում են* ա *կամ* օ *ձայնավորներով ավարտվող բաղադրիչներ: Վերջիններս, երկրորդ անդամներում առաջին դիրքում լինելով, բառաբարդման պահանջով հանդիպում են* ա *հոդակապին. երևան է գալիս* յ *ձայնակապը, որը չկար առաջին անդամում: Այս կերպ հնչյունակազմորեն միմյանցից տարբերվում են* սիրարքա *(սիրո արքա) «Սիրարքա դերվիշ եմ՝ վերքով անբալզամ՝ ...մազերիդ կարոտ»*[1] *– արքայասեր, գեղահմա - հմայագեղ, կամահաճո – հաճոյակամ, մտահաճո – հաճոյամիտ, սիրահաճո – հաճոյասեր, կցաշղթա – շղթայակից բառազույգերի անդամները: Շատ ավելի մեծ է* յ *բաղաձայնի դերը երկհնչյունների կազմում, որոնց կանդրադառնանք ստորև:*

Ն բաղաձայնը, որպես անդամների տարբերիչ հնչյուն, ձայնավորների համեմատությամբ ունենում է դիրքային հակառակ առանձնահատկություն: Եթե ի, է, ու *ձայնավորները հնչյունափոխվում են բառասկզբում և հանդես են գալիս բառավերջում, ապա այժմ հակառակն է: Ն հնչյունը պահպանվում է բառասկզբում և բառավերջի բաղադրիչում հանդես չի գալիս, քանի որ պատմական հնչյունափոխությունից հետո այն արմատում վերականգնվում է բառաբարդման հետևանքով: Այս կերպ, առատակաթ – կաթնառատ, բառասկիզբ - սկզբնաբառ, ձիաբեռ - բեռնաձի, կցամաս – մասնակից կարգի բառազույգերի երկրորդ ան-*

[1] *Հ. Շ ի ր ա զ. Քնար Հայաստանի, 1964, էջ 155:*

դամներում ունենում ենք ն *տարբերիչը: Հմմտ. նաև. առատախոստում – խոստումն առատ, զարդասեղ - ասեղն ազարդ, խաղասկիզբ- սկզբն ախաղ, բացդուռ - դռն բաց:*

Վ *բաղաձայնի մասին խոսելիս դարձյալ պետք է հիշել* ու *ձայնավորի հնչյունափոխությունը՝ այս անգամ* անուն *բառում և բաց վանկում, որտեղ այն փոխարկվում է* վ*-ի առաջին դիրքի արմատում՝ վերջին դիրքում մնալով* ու*, ինչպես. տառան*ուն *- ան*վ*անատառ, կնքան*ուն *- ան*վ*անակնիք, փոխան*ուն*ություն- ան*վ*անափոխություն, կցան*ուն *- ան*վ*անակից, կոչան*ուն *- ան*վ*անակոչ, ապա նաև. եզրաառ*ու *- առ*վ*եզր, կաթնաթթ*ու *- թթ*վ*ակաթ, կաղամբաթթ*ու *- թթ*վ*ակաղամբ, քաղցրաթթ*ու *- թթ*վ*աքաղցր:*

Հնչյունափոխվող երկհնչյուններից անհամեմատ մեծ թվով նույնաբաղադրիչ փոխատեղույթներում հանդես է գալիս ույ *երկհնչյունը: Երբեմն այն սղվում է բառագույգի անդամներից մեկում, մնում մյուսում՝ որպես տարբերիչ. գորշակապ*ույ*տ - կապտագորշ, կարմրակապ*ույ*տ – կապտակարմիր, հողմապտ*ույ*տ –պտտահողմ, շթասաառ*ույ*ց - սառցաշիթ: Ավելի հաճախ հանդիպում է* ու *ձայնավորի փոխարկվելու դեպքը, երբ ընկնում է* յ *բաղաձայնը: Վերջինս, անդամներից մեկում պահպանվելով, դառնում է հնչյունակազմի տարբերիչ. խոտաբույժ - բուժախոտ, խաղագույգ - զուգախաղ, հորդալույս-լուսահորդ, խոռվահույզ - հուզախռով, պայծառագույն - գունապայծառ:*

Սակավաթիվ են նույնաբաղադրիչ փոխատեղույթների այն զույգերը, որոնցում կան յա *երկհնչյունը և դրա փոխարկումը* է *ձայնավորի: Դրանցից են. զարդաժանյակ – ժանեկազարդ, զարդապատյան – պատենազարդ, գրամատյան – - մատենագիր և էլի մի քանիսը:*

Յու *երկհնչյունի հնչյունափոխության հետ կապված կան զուգաձևություններ: Բայց նախ հարկ է նշել, որ բառերի մեծագույն մասում այն մնում է անփոփոխ թե՛ բառասկզբի, թե՛ բառավերջի բաղադրիչներում: Սակայն ալյուր, արյուն, ձյուն արմատները բառասկզբի դիրքում հանդես են գալիս նաև հնչյունափոխված տարբերակներով, երբ* յու*-ն սղվում է: Մյուս անդամում՝ բառավերջում պահպանվելով, ի հայտ է գալիս հնչյունակազմական տարբերություն: Այդպես է խառնալ*ույ*ր - ալրախառն, պատալ*ույ*ր - ալրապատ, լիար*ույ*ն - արնալի, խառնար*ույ*ն - արնախառն, առատաձ*ույ*ն - ձնառատ և փոխատեղական այլ զույգերում: Բայց նշված արմատներն ունեն* յու*-ն պահպանած իրենց բառային տարբերակները. ուրեմն՝ վերը բերված զույգերը կարող են կազմվել մեկ այլ կերպ ևս. ալյուրախառն- խառնալյուր, ալյուրապատ- պատալյուր, լիարյունարյունալի, արյունախառն- խառնարյուն, առատաձյուն- ձյունառատ: Բոլոր այն դեպքերում, երբ* յու *երկհնչյունը առկա է երկու անդամներում էլ, դրանց տարահնչյուն լինելու համար պետք են այլ պատճառներ: Այդպիսիք չլինելու դեպքում անդամները դառնում են նույնահնչյուն:*

2. Ա հոդակապ*: Այստեղ տարահնչյունության է հանգեցնում հայերենի բառակազմության հայտնի օրենքներից մեկը: Այն է. որոշ բառեր բառաբարդվում են* ա *հոդակապի միջոցով, ուրիշները՝ առանց դրա: Այս կերպ գոյություն ունեն նաև բառային տարբերակներ: Նշված երկու կարգի բառերը կարող են կազմել փոխատեղույթային զույգեր, որոնցում անդամների հնչյունների քանակը տար-*

բերվում է՝ ի դեմս ա *հոդակապի՝ կազմում մեկ լրացուցիչ* ա *լինելով կամ չլինելով: Հեշտ է նկատել, որ սրտ*աբացություն-բացսրտություն, *յուղ*աքար-քարյուղ, *սայր*ասուր-սուրսայր, *հանք*աքար-քարհանք, *աղ*աքար-քարաղ *փոխատեղություններում երկրորդ անդամները մեկ հնչյուն պակաս ունեն՝ բարդված լինելով առանց հոդակապի: Նկատելի է նաև, որ եթե չհաշվենք շեղումները (օրինակ՝* ամենա *բաղադրիչով բարդությունները),* ա *հոդակապ որպես կանոն չեն ընդունում ձայնավորով սկսվող բառերը, երբ բարդվելիս լինում են վերջին դիրքում: Դրանց բառասկզբի ձայնավոր հնչյունը, հայտնվելով բառամիջում, բաղադրիչները կապակցող նշանակություն է ձեռք բերում: Ահա օրինակներ* ը, ի, ու, օ *ձայնավորներով սկսվող արմատների, որոնք մտնում են փոխատեղական բառաբարդությունների մեջ. ընթաց*ակից-կիցընթաց, *ընկեր*ախաղ-խաղընկեր, *ընտր*աճառ-ճառընտիր, *իմաց*աբանություն-բանիմացություն, *իմաստ*ախոր-խորիմաստ, *իրան*ագեղ-գեղիրան, *ուժ*աբան-բանուժ, *ունայն*աձեռնություն-ձեռնունայնություն, *ուրախ*ասիրտ-սրտուրախ, *օժիտ*ադրամ-դրամօժիտ, *օջախ*ասալ-սալօջախ, *օրոր*ադայլ-քայլորոր: Է *ձայնավորին կանդրադառնանք հաջորդ ենթակետում: Սակայն անհամեմատ մեծ է թիվը հոդակապով կամ առանց հոդակապի փոխատեղական զույգեր կազմող այն բառերի, որոնք սկսվում են* ա *ձայնավորով. շատ ավելին, քան մյուս հինգ ձայնավորներով սկսվողները՝ միասին վերցրած՝ մոտ 300 բառ: Այդպիսիք են. արձակ*ահեր-հերարձակ, *ատամն*աշրթնային–շրթնատամնային, *արժան*ապատվորեն–պատվարժանորեն, *ածիտ*ափայտ-փայտածուխ, *աչ*ագեղ-գեղաչ: *Այսպիսիների մեջ էլ զգալի թիվ են կազմում* առատ *արմատով բաղադրվածները՝ մոտ 80 բառ: Ինչպես. առատ*աձեռնություն-ձեռնառատություն, *առատ*ահորդ-հորդառատ, *առատ*ապերք-բերքառատ, *առատ*աշնորհ-շնորհառատ, *առատ*ադրս-դրսառատ:

Կա ա *հոդակապի հետ կապված տարահնչյուն փոխատեղությային անդամներ կազմելու մեկ այլ դեպք ևս: Բառերից մեկը կազմվում է* ա *հոդակապով, իսկ մյուսը՝* է. *վերջինս առաջանում է* ի *և* ա *ձայնավորների հաջորդականությունից: Այդպիսի բառազույգերում զգալի է* բաժին *բառով բարդվածները: Բերենք համապատասխան օրինակներ. պնդ*ագոտի-գոտեպինդ, *դեղ*ափոշի-փոշեդեղ, *լուս*ահոգի-հոգելույս, *խնդ*ամոլի-մոլեխինդ, *փնջ*ածաղիկ-ծաղկեփունջ, *սխալ*ահաշիվ-հաշվեսխալ, *և ապա. մասն*աբաժին-բաժնեմաս, *կիս*աբաժին-բաժնեկես, *հողաբաժին-բաժնեհող, չափ*աբաժին-բաժնեչափ *և այլն: Ըստ որում, հոդակապ հանդիսացող* է *ձայնավորը կարող է լինել անդամներից միայն մեկում և բերել հնչյունական տարբերություն, երբ մյուս անդամը բարդվում է առանց հոդակապի: Ինչպես. ուղ*եգորգ-գորգուղի, *ոսկ*եզարդ-զարդոսկի, *ուղ*եկապ-կապուղի, *օդ*եթուրմ-թրմօդի:

Վերջապես, ոչ մեծ թվով փոխատեղությային զույգերում էլ անդամներից մեկում հանդես է գալիս ա *հոդակապը, իսկ մյուսում՝ արմատներն իրար կապակցելու նշանակություն ձեռք բերած* ի *նախդիրը՝ կոր*ագլուխ-գլխիկոր, *մահ*ամերձ-մերձիմահ:

3. Արտասանական զանազանություն: *Փոխատեղությունների այս պատճառը որոշակի բառերում կապված է* յէ *երկհնչյունի, ուրիշներում* վօ *հնչյունակապակ-*

ցության և երրորդներում էլ ը *ձայնավորի հետ: Որոշիչն այն է, թե բաղադրիչները ո՞ր դիրքում են, ինչը և առաջ է բերում արտասանական փոփոխություններ:*

Երգասիրություն-սիրերգություն, եզրապատ-պատեզր, եղեգնախոտ-խոտեղեգ, երեսբաց-բացերես, երակազարկ-զարկերակ բառազույգերում բառասկզբի երգ, եզր, եղեգն, երես, երակ արմատներն սկսվում են ե *տառով, որ հնչում է* յէ*: Նույն բաղադրիչները երկրորդ անդամներում երկրորդ դիրքում են. բառասկզբի* ե*-ն հայտնվել է բառամիջում ու հնչում է* է*: Այստեղ* յ *բաղաձայնը վերանում է և մնում միայն առաջին անդամում՝ դառնալով արտասանական տարբերության պատճառ կամ պատճառներից մեկը: Բերենք նշված բառերի արտասանական տարբերության պատկերը՝ միայն քննվող հարցի առումով.* յէ*րգասիրություն-սիրէրգություն,* յէ*զրապատ-պատէզր,* յէ*ղեգնախոտ-խոտէղեգ,* յէ*րեսբաց-բացէրես,* յէ*րակազարկ-զարկէրակ: Ներկա տարբերությամբ փոխատեղույթները պետք է փնտրել բառարաններում* ե *տառով սկսվող բառերի շարքում: Հմմտ. նաև. երախաբաց-բացերախ, եզրառու-առվեզր, երգ-պար և պարերգ, եղնայծ-այծեղն, երեսպնդություն-պնդերեսություն, երգաշար-շարերգ, եղեգնաշաքար-շաքարեղեգ:*

Ո *տառով սկսվող բաղադրիչների դեպքում բառասկզբում հնչում է* վօ*. վերջինս դրափոխությունից հետո, հայտնվելով բառամիջում՝ հնչում է* օ*: Երկու անդամների տարահնչյունության պատճառը կամ պատճառներից մեկը դառնում է* վ *բաղաձայնը: Առաջ է գալիս արտասանական տարբերության այսպիսի պատկեր.* վօ*լոռնածաղիկ-ծաղկօլոռն,* վօ*սկեզարդ-զարդօսկի,* վօ*սկեձույլ - ձուլօսկի,* վօ*սկրապինդ - պնդօսկր,* վօ*տնաթեթն - թեթևօտն: Այս պատճառով առաջ եկած տարահնչյուն փոխատեղույթներն էլ բառարաններում պետք է փնտրել* ո *տառով սկսվող բառերի շարքում: Հմմտ. նաև. ոսկեթերթ-թերթոսկի, ոսկրագլուխ-գլխոսկր, ոտնծուռ-ծուռոտն, որսագողություն-գողորսություն, որսաշուն-շնորս:*

Այլ է ը *ձայնավորի պարագան: Բառազույգերում արտասանական տարբերությունն ի հայտ է գալիս այն անդամներում, որտեղ* ը*-ն հնչում է բառավերջի գաղտնավանկում՝ աղմկախառը*ն*, ժպտադառը*ն*, առատաձեռը*ն*, այծեզը*ն*, գեղանձը*ն*: Մյուս անդամում դրափոխված լինելով՝ այսպիսի բաղադրիչի արտասանությունն ուրիշ է լինում. գաղտնավանկի մի բաղաձայնը վանկ է կազմում նախորդող, իսկ մյուսը՝ հաջորդող* ա *հոդակապի կամ այլ հնչյունների հետ.* խառ*-*նաղմուկ*, դառ-*նաժպիտ*, ձեռ-*նառատ*, եզ-*նայծ*, անձ-*նագեղ*: Գաղտնավանկ* ը*-ն այստեղ վերանում է: Այս դեպքը վերաբերում է բառավերջում արմատական* ն *բաղաձայնը պահպանած բառերին, որոնք այս իմաստով պատմական հնչյունափոխության չեն ենթարկվել: Հմմտ. նաև. խնկեղեգն-եղեգնախունկ, ունայնաձեռն-ձեռնունայն, արմատախառն-խառնարմատ, ծաղկոլոռն-ոլոռնածաղիկ, թեթևոտն-ոտնաթեթն: Անշուշտ,* ը *ձայնավորի հետ կապված արտասանական տարբերության հանդիպում ենք անհամեմատ մեծ թվով այն բառերում, որտեղ,* ի, ու *ձայնավորները հնչյունափոխվելով, ինչպես նշել ենք վերը, վերածվել են* ը*-ի՝ բացսիրտ-սրրտաբաց, դրմաշիշ-շշադրում, ցուցանիշ-նըշացույց: Կամ. առատագութ-գթառատ, գազվուշ-փշագազ, շարքաքուծ-լծաշարք, կարմրաթուխ-թխակարմիր:*

Այսպիսով, փոխատեղությունների բառազույգերում անդամների տարահնչյունության պատճառները երեքն են՝ հնչյունափոխությունը, ա հոդակապով կազմված լինել-չլինելը, արտասանական զանազանությունները:

Մինչև այս՝ առանձին-առանձին ուշադրություն դարձվեց այն բառախմբերի վրա, որոնցում երևան էր գալիս նշված պատճառներից մեկնումեկը: Բայց այսպես լինում է փոխատեղությունների մի մասում: Մյուս մասում գործում են միատեղ մեկից ավելի պատճառներ՝ առաջինը երկրորդի կամ երրորդի, երկրորդը՝ երրորդի կամ երեքը միատեղ՝ մի բառազույգում: Վերցնենք առատապտուղ-պտղառատ, արկածասեր-սիրարկած զույգերը: Նկատելի է, որ անդամներում կա հնչյունափոխություն և ա հոդակապ ունենալ-չունենալու հանգամանքը: Մինչդեռ առատաձեռն-ձեռնառատ, երգասիրություն-սիրերգություն զույգերում՝ ա հոդակապով լինել-չլինելն ու արտասանական զանազանությունը: Եվ ապա. եղեգնաշաքար-շաքարեղեգ զույգում՝ հնչյունափոխություն, ա հոդակապ ունենալ-չունենալը և արտասանական զանազանությունը: Նույնն է երգասերսիրերգ զույգում:

Երևույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զույգ կազմող անդամները միմյանցից հնչյունապես կարող են տարբերվել մեկ կամ մի քանի հնչյուններով: Արդ, հետաքրքիր է իմանալ, թե որքանի կարող է հասնել այդ տարբերությունը և թե, ընդհանրապես, հնչյունական քանակային տարբերությունների ինչ դեպքեր կան: Նախ ասենք, որ բառազույգի ներսում տարբերիչ հնչյունները կարող են բաշխված լինել այլևայլ կերպ: Որոշ դեպքերում դրանց թիվն անդամներում հավասար է, ուրիշներում՝ անհավասար, երրորդներում տարբերիչ հնչյունները միայն մեկ անդամում են, այդ իմաստով մյուսը չեզոք է:

Այժմ դառնանք քանակային կոնկրետ տարբերություններին:

ա. Մեկ հնչյուն: Ամենից փոքրաթիվ տարբերիչն է: Դա կարելի է նկատել, օրինակ, հետևյալ փոխատեղություններում. աղացաքար-քարաղաց, բեռնաձի-ձիաբեռ, գորշադեղին-դեղնագորշ, խոտաբույժ-բուժախոտ, խաղազույգ-զուգախաղ: Առաջին զույգում միակ տարբերիչն է՝ ա, երկրորդում՝ ն, երրորդում՝ ի, վերջին երկուսում՝ յ հնչյունները:

բ. Երկու հնչյուն. անվափոկ-փոկանիվ, գայլաշուն-շունագայլ, թթվակաղամբ-կաղամբաթթու, ուղեփակ-փակուղի, գիտափորձ-փորձագետ: Տարբերիչներն են. առաջին զույգում ա, ի, երկրորդում՝ ու, ը, երրորդում՝ վ, ու, չորրորդում ու հինգերորդում՝ է, ի հնչյունները:

գ. Երեք հնչյուն. ապակեձույլ-ձուլապակի, առատագութ-գութառատ, դեղնակապույտ-կապտադեղին, թթվակաթ-կաթնաթթու, դեղափոշի-փոշեդեղ: Տարբերիչներն են. առաջին զույգում է, յ, ի, երկրորդում՝ ա, ու, ը, երրորդում ու, յ, ի, չորրորդում վ, ն, ու և հինգերորդում՝ ա, ի, է:

դ. Չորս հնչյուն: Այսպիսի տարբերությամբ նույնաբաղադրիչ փոխատեղությունները նկատելիորեն պակաս են հանդիպում: Դրանցից են. անվանափոխություն-փոխանունություն, բացուռ-դրուռնբաց, վոսկեձույլ-ձուլոսկի, բաժնեմասմասնաբաժին: Տարբերիչներն են. առաջին զույգում վ, ա (երկու), ու, երկրորդում՝ ու, ը (երկու), ն, երրորդում՝ վ, է, յ, ի, չորրորդում՝ է, ն, ա, ի հնչյունները:

ե. Հինգ հնչյուն: Սա տարբերիչների առավել մեծ թիվն է: Հնչյունակազմական այսպիսի տարբերությամբ նույնաբաղադրիչ փոխատեղույթներն իրենց հերթին ավելի պակաս են, քան չորս հնչյունով տարբերվողները: Սրանցից են. անվանակնիք-կնքանուն, կիտաբաժին-բաժնեկես, յերգչախումբ-խումբերգիչ: Տարբերիչներն են. առաջին զույգում վ, ա *(երկու),* ի, ու, *երկրորդում՝* ի *(երկու),* ա, է *(երկու), երրորդում՝* յ, ա, ու, ը, ի*:*

Նկատենք, որ ի տարբերություն հնչյունաբանության հետ առնչվող դրափոխության լեզվական երևույթի, որտեղ հետևառաջում են մեկ-երկու հնչյուններ՝ առանց անդրադառնալու բառիմաստի վրա, ներկա՝ բառագիտականի դեպքում, դրափոխվում են ամբողջական արմատներ, ըստ որում, հաճախ ածանցների հետ ու հետևառաջում են երկուսից տասը և կամ ավելի հնչյուններ՝ հանգեցնելով ոչ միայն արտասանական, այլև նոր բառերի կազմության, իսկ փոխատեղույթների մի մասում՝ նաև բառիմաստային փոփոխությունների:

II. ՆՈՒՅՆԱՀՆՉՅՈՒՆ ՆՈՒՅՆԱԲԱՂԱԴՐԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐ

Ինչպես նշեցինք, այս կարգի փոխատեղույթները բաղկացած են բացառապես միևնույն հնչյուններից: Սա նշանակում է, որ անկախ բաղադրիչների դրափոխությունից՝ բառասկզբում, բառամիջում կամ բառավերջում լինելուց, հնչյունափոխության, հոդակապի, արտասանության հետ կապված փոփոխությունները այստեղ չեն գործում: Դիտարկենք նշված տարբերություններին հանգեցնող պատճառների բացակայության հանգամանքներն առանձին-առանձին:

Ամենից առաջ նշենք, որ կան բառաբարդման երկու եղանակով կազմվող բառերի տեսակներ, որոնցում հնչյունափոխություն իսպառ տեղի չի ունենում: Նախ՝ դրանք զուգադրական հարադրություններ են: Բաղադրիչները սրանցում համազոր են, թվարկման բնույթ ունեն, իսկ գրության մեջ կապակցվում են գծիկով: Անկախ առաջին կամ երկրորդ դիրքում լինելուց, իմաստային, արտասանական, հատկապես շեշտադրական տարբերություններ չեն առաջանում: Այդ պատճառով էլ աղբյուր-հուշարձան, գիշեր-ցերեկ, գրիչ-թանաք, դաստիարակչական-ուսուցողական, առնել-տալ, բարձրանալ-իջնել, հարգել-պատվել, և համապատասխան փոխատեղական՝ հուշարձան-աղբյուր, ցերեկ-գիշեր, թանաք-գրիչ, ուսուցողական-դաստիարակչական, տալ-առնել, իջնել-բարձրանալ, պատվել-հարգել անդամները նույնահնչյուն են: Նույնպիսիք են նաև. դիոլ-զուռնա և զուռնա-դիոլ, կանաչ-կարմիր և կարմիր-կանաչ, շատ-քիչ և քիչ-շատ, տուն-տեղ և տեղ-տուն, ուռած-փքված և փքված-ուռած, հարգել-սիրել և սիրել-հարգել ու նման ուրիշ շատ զույգերում:

Հաջորդը բաղհյուսական բարդություններն են՝ համադրական թե վերլուծական: Բաղադրիչներն անդամներում դարձյալ համազոր են, թվարկման բնույթի, իսկ զուգադրականների կապակցող գծիկին այստեղ թե՛ գրության, թե՛ արտասանության մեջ փոխարինում են և, ու *շաղկապները: Կցականներից են. առնտուր-տուրևառ, դեմնթեր-թերևդեմ, կռիվուվեճ-վեճուկռիվ, դարդուցավ-ցավուդարդ, դուրսուներս-ներսուդուրս, վերուվար-վարուվեր, մեծուփոքր-փոք-*

բումեծ, ձեռուոտ-ոտուձեռ: Վերլուծականներից են. ծառ ու ծաղիկ- ծաղիկ ու ծառ, ծեր ու մանուկ-մանուկ ու ծեր, հետ ու առաջ-առաջ ու հետ, բառ ու բան-բան ու բառ, ջուր ու ցեխ-ցեխ ու ջուր, դաշտ ու սար-սար ու դաշտ փոխատեղական զույգերը:

Սակայն նույնահնչյուն նույնաբաղադրիչ փոխատեղությունների մեջ մտնում են անհամեմատ մեծ թվով իսկական բարդություններ: Դրանցում բաղադրիչները համազոր չեն, այլ ներքին շարահյուսական զանազան հարաբերությունների մեջ են, ինչպես ցույց է տալիս բառիմաստային քննությունը: Նույնահնչյունության պատճառն այժմ ձայնավորների մեջ է, որոնք, եթե առանձին դեպքերը հաշվի չառնենք, հնչյունափոխության չեն ենթարկվում: Դրանք են՝ ա, է *(գրաբարյան* ե), օ *(գրությամբ նաև՝* ո*): Նույնը պետք է ասել* յու *երկհնչյունի վերաբերյալ: Ասվածը ցույց տանք օրինակներով:* Ա *ձայնավորով բառազույգեր. զարդաքանդակ-քանդակազարդ, մայրաքաղաք-քաղաքամայր, լանջաբաց-բացալանջ, տախտակախաղ-խաղատախտակ, ցանցավանդակ-վանդակացանց: Խառն ձայնավորներով բառազույգեր. բերդաքաղաք-քաղաքաբերդ, գորշաճերմակ-ճերմակագորշ, գորովաջերմ-ջերմագորով, թևալող-լողաթև, թերթապողպատ-պողպատաթերթ, խոտակեր-կերախոտ, մոլորաքայլ-քայլամոլոր, զարդապատկեր-պատկերազարդ:*

Յու *երկհնչյունով բառազույգեր. գյուղաքաղաք-քաղաքագյուղ, կաթնայուղատու-յուղակաթնատու, ձյունաճերմակ-ճերմակաձյուն, պսակահյուս-հյուսապսակ, սյունակամար-կամարասյուն, սյունաշար-շարասյուն:*

Գաղտնավանկ ը*-ն հնչում է բառազույգի երկու անդամներում էլ՝ պահպանելով իր գործառույթը, և արտասանական տարբերությունների պատճառ չի դառնում, ինչպես տարահնչյուն, արտասանությամբ տարբեր փոխատեղությունների ժամանակ: Օրինակ. բնակատեղ-տեղաբնակ, գնդակախաղ-խաղագնդակ, խոռվամտություն-մտախռովություն, պսակագեղ-գեղապսակ, նմուշափորձ-փորձանմուշ:*

Տարահնչյուն նույնաբաղադրիչ փոխատեղությունների մասին խոսելիս մենք նշեցինք, որ բառասկզբում ու, ի *ձայնավորները, շեշտակիր չլինելով, հնչյունափոխվում են: Բայց այս կանոնը բացարձակ չէ: Սույն փոխատեղություններում հանդիպում են բառեր, որոնք սկզբում ունեն հենց նշված ձայնավորները: Վերջիններս հնչում են նաև զույգ կազմող անդամում՝ բառամիջում կամ բառավերջում: Այսպիսի բառերը կամ գրքային են, բանաստեղծական, կամ տերմիններ, թեև կան նաև առօրյա բառեր, որոնք խոսակցականում ու բարբառներում ունեն իրենց հնչյունափոխական տարբերակները: Նախ բերենք* ի *ձայնավորով օրինակներ. նիզականետ-նետանիզակ, ծիծաղագեղ-գեղածիծաղ, գիշերահավասար-հավասարագիշեր, սպիտակագորշ-գորշասպիտակ, թիթեղաձաձկ-ձաձկաթիթեղ, տիկնիկախաղ-խաղատիկնիկ, քիթկախ-կախքիթ: Այս շարքին են պատկանում նաև այն բառերը, որոնք կազմված են թի, ձի, լի արմատներով, քանի որ* ի*-ն, բաց վանկում, չի հնչյունափոխվում՝ թիանավ-նավաթի, ձիաքարշ-քարշաձի, լիահյութ-հյութալի:*

Պետք է նկատել, որ սկզբնավանկում ի *կարող է լինել նաև՝ իբրև հետևանք* է *ձայանվորի հնչյունափոխության: Ինչպես. գիսակագեղ-գեղագիսակ, դիմակա-*

խաղ-խաղադիմակ, վիճաբանել-բանավիճել, թիկնոցավրան («թէկն» արմատից)-վրանաթիկնոց:

Առաջին դիրքի բաղադրիչում հանդես եկող ու *ձայնավորի օրինակներ են. փուշգազ-գազփուշ, գլուխկախ-կախգլուխ, խութաժայռ-ժայռախութ, խուփբերան-բերանխուփ, սուսերամարտ-մարտասուսեր, նմուշափորձ-փորձանմուշ: Ուղտայծ-այծուղտ, ուղևորաբեռնատար-բեռնաուղևորատար բառազույգերի առաջին անդամներն ուղղակի սկսվում են* ու*-ով, որն էլ պահպանվում է բառամիջում:*

Ն *բաղաձայնը նույնահնչյուն փոխատեղույթներում ևս կարող է չենթարկվել պատմական հնչյունափոխության և համապատասխան արմատի կազմում լինել բառազույգի երկու անդամներում էլ: Այդ երևաց մի քանի տարահնչյուն փոխատեղույթներում, որոնցում* ն*-ով ավարտվող արմատը հանդես գալով բառավերջում, նույնահնչյունության չէր հանգեցնում, քանի որ կային հնչյունակազմի տարբերության այլ պատճառներ: Ներկա դեպքում* ն*-ով ավարտվող արմատը անդամներից մեկում հանդես է գալիս բառամիջում, քանի որ հաջորդում են ածանցներ կամ այլ արմատներ: Որպես այս հանգամանքի հետևանք՝* ն *բաղաձայնը չի ընկնում՝ հանգեցնելով նույնահնչյունության, որովհետև հնչյունակազմական այլ տարբերություններ չկան: Օրինակներ. բեռնամբարձիչ-ամբարձաբեռնիչ, բեռնաուղևորատար-ուղևորաբեռնատար, կաթնաթթվային-թթվակաթնային, կաթնամսատու-մսակաթնատու, լեռնահովտային-հովտալեռնային:*

Մինչև հիմա անդրադառնում էինք այն նույնահնչյուն փոխատեղույթներին, որոնք առաջանում էին հնչյունափոխության բացակայության պատճառով: Այժմ կանգ առնենք այնպիսիների վրա, որոնց երկու անդամներում էլ առկա է հնչյունափոխությունը: Եթե տարահնչյուն փոխատեղույթներում հնչյունափոխված արմատն առաջին դիրքում էր, իսկ անհնչյունափոխը՝ երկրորդ, ավարտելով բառը, ապա այժմ երկու դիրքում էլ արմատները հնչյունափոխված են: Եվ սա դարձյալ իբրև հետևանք այն բանի, որ ավելանում է ուրիշ արմատ կամ ածանց: Շեշտը տեղափոխվում է բառավերջ՝ հանգեցնելով հնչյունափոխության, և արմատները նույն կերպ հանդես են գալիս երկու անդամում էլ՝ առաջ բերելով նույնահնչյունություն: Այսպես. դեղնակապույտ-կապտադեղին բառազույգը տարահնչյուն է, սակայն ավուն *ածանցն ավելացնելուց հետո ունենում ենք նույնահնչյունություն՝ դեղնակապտավուն-կապտադեղնավուն: Գեղանկարիչ-նկարչագեղ տարահնչյուն զույգին* ություն *ածանցն ավելացնելուց հետո ունենում ենք՝ գեղանկարչություն-նկարչագեղություն նույնահնչյունը.* ի *ձայնավորը սղվում է երկու անդամում էլ: Նույն կերպ. կաթնաթթու-թթվակաթ (տարահնչյուն), բայց կաթնաթթվային և թթվակաթնային (նույնահնչյուն). երկու անդամում էլ առկա են* ն, վ *բաղաձայնները: Ահա այս ճանապարհով առաջ եկած ևս մի քանի նույնահնչյուն փոխատեղույթներ. բանասիրական-սիրաբանական, բանասիրություն-սիրաբանություն, բանավիճել-վիճաբանել, դարչնակարմրագույն-կարմրադարչնագույն, կապտականաչավուն-կանաչակապտավուն:*

Վերջապես, հնչյունափոխության հետևանքով նույնահնչյուն նույնաբաղադրիչ փոխատեղույթների առաջացման մի եղանակ ևս: Այս դեպքում անդամները բաղկացած են զուտ երկուական արմատից, և բառերը երկարացնելու անհրա-

ժեշտությունը չկա: Դրանք երկուստեք ենթարկվում են միևնույն հնչյունափոխությանը: Երբ բույժ *և* բույս *արմատները բառաբարդվում են,* ույ *երկհնչյունը առաջին դիրքի արմատում հնչյունափոխվում է՝* բուժաբույս, *իսկ դրափոխությունից հետո,* բույս *արմատն է հնչյունափոխվում՝* բուսաբույժ*: Այս փոխատեղականներն իրենց ամբողջության մեջ նույնահնչյուն են: Կամ. երկու բաղադրիչների դրափոխությունից հետո,* ի *ձայնավորի հնչյունափոխությամբ առաջ են գալիս գծագիր-գրագիծ, գրանիշ-նշագիր, ժպտաթախիծ-թախծաժպիտ, պնդաջիլ-ջլապինդ, պնդասրտություն-սրտապնդություն նույնահնչյուն փոխատեղականները: Ներկայացվող եղանակով առաջացող նույնահնչյուն փոխատեղությունները մեծաթիվ չեն:*

Այժմ անցնենք հոդակապի դերակատարությանը: Վերը տեսանք, որ բառազույգի անդամներից մեկում հոդակապ լինել-չլինելը հանգեցնում է տարահնչյունության: Նույնահնչյունության դեպքում երկու անդամներում էլ կամ պետք է լինի հոդակապ, կամ չպետք է լինի: Նախ բերենք ա *հոդակապով փոխատեղականների օրինակներ. բառավանկային-վանկաբառային, զարդածառ-ծառազարդ, լսատեսողական-տեսալսողական, մայրաքաղաք-քաղաքամայր, հեռուստառադիոեթեր-ռադիոհեռուստաեթեր, ռադիոհեռուստահաղորդում-հեռուստառադիոհաղորդում, հողաքարային-քարահողային, հողասակավություն-սակավահողություն: Ուշադրություն դարձնենք հետևյալ զույգերի հետ կապված մի հանգամանքի վրա. իրանագեղ-գեղահիրան, լողաթև-թևալող, գլխաբաց-բացագլուխ զույգերի երկրորդ անդամներն ունեն իրենց անհոդակապ բառային տարբերակները՝ գեղիրան, թևլող, բացգլուխ: Ուրեմն նշված առաջին անդամները, որ հոդակապով են և նույնահնչյուն են իրենց փոխատեղությային մի բառային տարբերակի հետ, իսկ մյուսի հետ՝ տարահնչյուն են:*

Այժմ բերենք անհոդակապ բառազույգերի օրինակներ. այծուղտ-ուղտայծ, նեղսրտել-սրտնեղել, փակբերան-բերանփակ, քիթկախ-կախքիթ, կախգլուխ-գլուխկախ, խոտավել-ավելխոտ: Անհոդակապ անդամներն էլ կարող են ունենալ իրենց հոդակապով տարահնչյուն տարբերակները, ինչպես՝ գազփուշ-փուշգազ (փշագազ), բացթև-թևբաց (թևաբաց), սրտնեղություն-նեղսրտություն (նեղասրտություն), սուրսայր-սայրսուր (սայրասուր):

Նույնահնչյուն նույնաբաղադրիչ փոխատեղությները ունենում են միևնույն հնչյունական կազմը: Այդուհանդերձ, դրանք նույնահնչյուն են, բայց ոչ նույնահունչ, *քանի որ բաղադրիչների հետևառաջությունից հետո փոխվում է նաև հնչյունների արտասանության հերթականությունը:*

Այսպիսով, նույնաբաղադրիչ փոխատեղությների հնչյունական քննությունը վեր է հանում տարահնչյուն և նույնահնչյուն ոչ նույնահունչ բառազույգերի մի հետաքրքրական շարք:

РАЗБОР ФОНЕТИЧЕСКОГО СОСТАВА СЛОВ С ПЕРЕСТАНОВОЧНЫМИ ИДЕНТИЧНЫМИ КОМПОНЕНТАМИ

СУСАННА ГЕВОРКЯН

Р е з ю м е

Вследствие перестановки своих компонентов – корней и суффиксов, перестановочные слова подвергаются фонетическим изменениям и по этому признаку делятся на две большие группы: с различными звуковыми составами и с одинаковыми звуковыми составами. Члены лексических пар с разными звуковыми составами могут отличаться друг от друга звуками от 1 до 5. Члены лексических пар с одинаковыми звуковыми составами состоят исключительно из одних и тех же звуков. Меняется только очередность их произношения.

INQUIRY INTO THE PHONETIC COMPOSITION OF WORDS WITH TRANSPOSITIONAL IDENTICAL COMPONENTS

SUSANNA GEVORGYAN

S u m m a r y

As a result of transposition of their components - roots and suffixes Armenian transpositional words undergo certain phonetic changes and are therefore divided to two large groups: words with diverse phonetic structure and words with the same phonetic structure. Members of the lexical pairs with diverse or changed phonetic structure may differ from each other by sounds from 1 to 5. Members of lexical pairs with the similar phonetic structure are composed exclusively of the same phonemes but the order of their pronunciation is different.